

Ընտրական համակարգերի միջազգային փորձագիտական կենտրոնի
(ICES) դիտորդական առաքելության հաշվետվությունը

2012 թվականի ԼՂՀ նախագահական ընտրությունների վերաբերյալ

20.07.2012, ք. Ստեփանակերտ

Ընտրական համակարգերի միջազգային փորձագիտական կենտրոնի առաքելությունը (ICES) Գերմանիայից, Հունգարիայից, Չեխիայից և Իսրայելից (թվով 10 դիտորդներ), որն հավատարմագրված էր ԼՂՀ ԿԸՀ-ում, ներկայացնում է իր եզրակացությունը Լեռնային Ղարաբաղի նախագահի ընտրության նպատակով ընտրական գործընթացի անցկացման վերաբերյալ:

Աշխատանքի առաջին փուլում առաքելության անդամները ծանոթացել են ԼՂՀ Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի հետ: Անհրաժեշտ է նշել հանրապետության ղեկավարության կողմից կատարած աշխատանքը՝ ուղղված օրենսդրական հիմքը և ընտրական օրենսգիրքը ընդունված միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն: Ընտրությունների նախօրյակին՝ այսպես կոչված «լռության օրը», առաքելության դիտորդները չեն հայտնաբերել քարոզչության շարունակության փաստեր, ինչը հաստատվեց ԼՂՀ նախագահի թեկնածուների հետ հանդիպումների ժամանակ:

Առաքելությունը նշում է ԼՂՀ ղեկավարության լուրջ շահագրգռվածությունը ժողովրդավարական և թափանցիկ ընտրությունների անցկացման գործում, ինչի մասին է վկայում Ամերիկայի, Եվրոպայի և Ասիայի տարբեր պետություններից մեծաթիվ միջազգային դիտորդների հրավիրումը: Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում ԼՂՀ ԿԸՀ աշխատակիցներին՝ նրանց կողմից «Ձեռնարկ դիտորդների համար» պատրաստելու կապակցությամբ:

Ընտրության օրը առաքելության փորձագետները այցելել են Ստեփանակերտում, Ասկերանի, Մարտունու և Շուշիի շրջաններում տեղակայված 52 ընտրատեղամասեր:

Արդյունքների վերլուծության հիման վրա մենք կարող ենք փաստել, որ ընդհանուր առմամբ ընտրությունները անցել են թեկնածուների ժողովրդավարական մրցակցային պայքարի պայմաններում, ընտրողների շատ բարձր մասնակցությամբ և համապատասխանում էին միջազգային ընտրական իրավունքի հիմնական սկզբունքներին և պահանջներին: Ընտրությունների ընթացքում պահպանվել են հիմնական կանոնները, որոնք ապահովել են կամքի արտահայտման ազատություն, ընտրատեղամասերում ձայների հաշվառում և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի դիտարկում:

Առաքելությունը իր գոհունակությունն է հայտնում այն փաստի վերաբերյալ, որ ընտրական գործընթացի ընթացքում չի եղել հասարակարգի ոչ մի խախտում, ոչ ոք քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման ընդհատման փորձ չի ձեռնարկել:

Չնայած մի շարք տեխնիկական բարդությունների և խախտումների առկայությանը, որոնք կապված են որոշ ընտրատեղամասերի մոտակայքում լավ տեսանելի տեղեկատվության բացակայության, ինչպես նաև տեղամասերում քվեարկողների մեծ կուտակումների և մի շարք գյուղերում ընտանեկան քվեարկության տեսած փորձերի հետ, մենք այնուամենայնիվ համոզված ենք, որ ԼՂՀ նախագահի ընտրություններն անցել են հաջող, իսկ գրանցված տեխնիկական անճշտությունները չեն կարող տապալել ԿԸՀ-ի կողմից ֆիքսված հանրապետության քաղաքացիների քվեարկության արդյունքները:

Մենք նշում ենք, որ այն ընտրատեղամասերում, որոնցում ներկա են գտնվել մեր դիտորդները, ինչպես նաև ԿԸՀ-ի արձանագրությունների փոխանցման ժամանակ, ընտրությունների արդյունքների կեղծում չի եղել:

Այսպիսով, Ընտրական համարգերի փորձագիտական միջազգային կենտրոնի միջազգային դիտորդների պաշտոնական առաքելությունը 2012 թվականի Լեռնային Ղարաբաղի նախագահի ընտրությունների գործընթացը համարում է հանրապետության քաղաքացիների ազատ կամքի դրսևորման կայացած ժողովրդավարական ակտ, որը համապատասխանում է ընտրական իրավունքի միջազգային նորմերին:

Առաքելության ղեկավար

ICES նախագահ,

Դոկտոր Ալեքսանդր Ցինկեր